

**ԱՐՄԻՆ Թ. ՎԵԳՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՐՏԻՆ ՏԱՄԿԵԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Տ. Ն.

Ժամանակակից պատմագրությունը Գերմանիայում տարաբնույթ գնահատմամբ է անդրադառնում հայ ժողովրդի լավագույն «բարեկամներից» մեկի՝ Արմին Թեոֆիլ Վեգների հայանպաստ գործունեությանը, կյանքի ուղուն, ստեղծագործական ժառանգությանը: Այս իմաստով, թերևս, ամենախոր գիտաքննական աշխատությունների հեղինակը Գերմանիայի Գեորգ Ավգուստ համալսարանի պրոֆեսոր, աստվածաբանության դոկտոր Մարտին Տամկեն է:

Հայոց ցեղասպանության առնչությամբ Ա. Թ. Վեգների «հայանպաստ» գործունեությունը լուրջ վերանայման է ենթարկել նաև Բեռլինի բաց համալսարանի աշխատակից, Հայաստանում քաջածանոթ գիտնական Թեսա Հոֆմանը¹: Մ. Տամկեի մենագրություններն ու հոդվածները, սակայն, բացառիկ և երկարատև արխիվային հետազոտությունների արդյունք են, որոնք արդի հայագիտության և պատմագրության առջև մի նոր խնդիր են դնում՝ վերանայելու Հայոց ցեղասպանության պատմության «վեգներյան ժառանգությունը», իմաստավորելու այդ «ժառանգությունը» նոր՝ իրատեսական և գիտական ճշմարտության ճանաչողության մոտեցմամբ, ինչը, մեր համոզմամբ, մինչ օրս տարբեր պատճառներով Հայաստանում չի կատարվել: Հայոց ցեղասպանության, Արմին Թ. Վեգների վերաբերյալ Մ. Տամկեի հեղինակած գլխավոր հետազոտությունը, որպես ատենախոսություն շարադրված, ապա՝ 1993 թ., հրատարակված և 1996 թ. լրացումներով վերահրատարակված՝ «Արմին Թ. Վեգներ. մի ականատեսի պահանջատիրությունն ու իրականությունը»² մենագրությունն է: Մ Տամկեի շարադրած մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածները լրացնում և ավելի հանգամանակից բացահայտում են Հայոց ցեղասպանության նկատմամբ Ա. Վեգների դրսևորած ողջ հետաքրքրասիրության իրական դրդապատճառները:

Հեղինակի խոստովանությամբ, մենագրությունը շարադրվել է մեկ տասնամյակ, իսկ շրջանառության մեջ դրված նորահայտ փաստաթղթերի քանակը գերազանցում է մի քանի հարյուրը: Օգտագործված փաստաթղթերի զգալի մասը հայտնաբերվել է Մարբախից՝ Գերմանիայի Դաշնության Գրականության արխիվից, որտեղ, ի թիվըս մեծանուն Գյոթեի, Շիլլերի, Հայնեի և այլոց, պահպանվում է

¹ **Hofmann T.**, *Armin Wegner: Writer, Eyewitness and Photographer of the Armenian Genocide*, National Academy of Sciences of RA, Yerevan, Institute-Museum of Armenian Genocide, E., 1996.

² **Tamcke M.**, *Armin T. Wegner und die Armenier. Anspruch und Wirklichkeit eines Eugenzeugen, Studien zur Orientalischen Kirchengeschichte, Bd. 2, Lit Verlag, 1996* (այսուհետև՝ **Tamcke M.**, *Armin T. Wegner und Armenier*). Լրաբեր 2-3

նան գրող, հրապարակախոս, Ա. Թ. Վեզների անձնական արխիվը: Համաձայն Մարբախում հայտնաբերված փաստաթղթերի, Վեզների ճակատագիրը հայ ժողովրդի հետ կապվում է ինքնաբերաբար, երբ վերջինս, որպես ռուս-գերմանական ռազմաճակատում գործող բանակի բուժեղբայր, խուսափելով ռազմի դաշտից, 3-ամսյա հանգրսուցից հետո, օգտագործելով իր մոր և ծովակալ Տիրպիցի կնոջ միջև բարեկամական հարաբերությունները, գործուղվում է Կ. Պոլիս, ապա՝ Փոքր Ասիա և Միջագետք: Ըստ այդ վավերագրերի, Վեզների՝ Օսմանյան Թուրքիայում ճամփորդության նպատակը «Արևելքի իմացությունը նոր ապրումներով և փորձով համալրելն էր»: Վեզները ժամանեց Կ. Պոլիս 1915 թ. ապրիլին, որպես Տրյուսչլերի գլխավորած Կարմիր խաչի սանիտարական առաքելության անդամ՝ լի հավատով, որ իր հետագա գրական ստեղծագործությունների համար գտնելու է ոգեկոչող ու պարարտ հող:

1915 թ. ապրիլի 8-ին, պատասխան նամակով, ընդառաջ գնալով թոռան խնդրանքներին, Թոնեֆիլիա Վիթթը Վեզներին է ուղարկում լուսանկարչական փոքրիկ ապարատ³: Այն հետագայում վերածվելու էր այն հզոր գործիքին, որի օգնությամբ Վեզները պետք է կերտեր Հայոց ցեղասպանության ականատեսի իր կերպարը, այն աստիճանաբար վերակերտելով հայ ժողովրդի բարեկամի՝ մի փաստ, որը հանգամանալից ներկայացնում է պրոֆ. Տամկեն իր մենագրության մեջ: Երիտասարդ Վեզները Կ. Պոլսի մերձակայքում հանգստի վերածված «ծառայությունը» վայելեց շատ կարճ: Դարդանելի ափին գտնվող գերմանական լազարեթներից մեկում 6 շաբաթ որպես սանիտար աշխատելուց հետո Վեզները շատերի նման վարակվում է տիֆով և 1915 թ. հունիսի 13-ից մինչև օգոստոսի 15-ը բուժվում Բերայում գտնվող գերմանական հիվանդանոցում: 1915 թ. սեպտեմբերի 1-ին հանգրվանում է Բեռլինի մի արվարձանի հանգստյան տներից մեկում: 1915 թ. հոկտեմբերի վերջին վերադառնում է Կ. Պոլիս, որտեղ պարզում է, որ Տրյուսչլերի Կարմիր խաչի սանիտարական առաքելությունը դադարել է գործելուց: Մ. Տամկեն հեզնանքով է նշում, որ Ա. Վեզների գործուղումը Կ. Պոլիս (1915 թ. ապրիլի 15-ից մինչև հոկտեմբերի վերջը) 1,5 ամիս դրսևորվում է որպես բուժեղբոր ծառայություն, ապա՝ 4 ամսյա հանգիստ: Մի հանգամանք, որը, հեղինակի կարծիքով, բնորոշում է Վեզների կյանքի սիմուլյացիոն ողջ ուղին⁴:

1915 թ. նոյեմբերի 1-ին Ա. Վեզները մեկ անգամ ևս, օգտագործելով ընտանեկան կապերը, նշանակվում է Միջագետքում գտնվող նորաստեղծ թուրքական 6-րդ բանակի հրամանատարությունը ստանձնած՝ գերմանացի զենեղալ Կոլմար ֆոն դեր Գոլցի շտաբին կից գործող սանիտարական առաքելության բուժեղբայր: Ա. Վեզների՝ դեպի Բաղդադ տանող ճանապարհին ընթանում էր շատ դանդաղ, Հալեպը լի էր հայ փախստականներով, որոնք, ինչպես Վեզներն ինքը հետագայում պետք է նշեր, «թունավորում էին քաղաքն ի

³ Նույն տեղում, էջ 31-33:

⁴ Նույն տեղում, էջ 40-44:

րենց համաձայնակներով»⁵: Կարճ անց, գեներալ ֆոն դեր Գոլցի հրամանով երիտասարդ բանաստեղծ Վեզները շարքային սանիտարից բարձրանում է սանիտար-ենթասպայի աստիճանի: Բաղդադում Ա. Վեզները երկրորդ անգամ է հիվանդանում տիֆով (դեկտեմբերի 15-ին): 1916 թ. ապրիլի 8-ին տիֆից մահանում է հովանավորը՝ ֆոն դեր Գոլցը: Ապրիլի կեսից մինչև 1916 թ. մայիսի 19-ը Ա. Վեզներն ապաքինվում է Բաղդադի երկաթգծի լազարեթում, ապա կրկին վալելում երկշաբաթյա ապաքինման արձակուրդը Բաբելոնում: Վերադառնալով Բաղդադ՝ Վեզները ստանձնում է «խոլերայով վարակվածների կացարանների ղեկավարի» պաշտոնը⁶: Այս շրջանում, Ա. Վեզները բազմիցս, օգտագործելով իր կապերը, ինչպես գերմանացի, այնպես էլ թուրք իր վերադասից աղերսում է 4-ամսյա արձակուրդ դեպի հայրենիք՝ նմանատիպ աղերսագրերով դիմելով Հալիլ փաշային, ապա՝ Բաղդադում Գերմանիայի հյուպատոս Հեզեին: Բայց ապարդյուն, նրան շնորհում են միայն Կ. Պոլսում հանգստանալու թույլտվություն⁷:

Հայոց ցեղասպանության ականատեսի՝ վեզներյան դիտարկումները, որ սկսվել էին դեռևս դեպի Բաղդադ ճանապարհին, մանավանդ Հալեպում կուտակված բռնագաղթածների հետ շփմամբ, նոր թափ են ստանում կարծես թե 1916 թ. երկրորդ կեսից, երբ նա Բաղդադում էր: Պրոֆ. Տամկեն պնդում է, որ Վեզները սկսում է շարադրել իր հայտնի «Պատերազմի օրագիրը» միայն 1916 թ., և որից ապագայում պետք է հրատարակվեր միայն մեկ հատված: «Օրագիրը» գրված է մատիտով, բառերի հապավումներով և աղճատումներով, հին գերմաներենով, գրեթե անընթեռնելի մի ձեռագրով: «Օրագրի» գիտական քննությունն անհրաժեշտ է՝ հասկանալու Հայոց ցեղասպանության վեզներյան գնահատականները, ընկալելու իր անձի շուրջ սեփական ջանքերով ստեղծած առասպելը և «փրկչի» կերպարի էությունն ու բովանդակությունը⁸:

Մ. Տամկեի աշխատության հետաքրքիր դրվագներից է, օրինակ, հետևյալ բացահայտումը: Դեպի Կ. Պոլիս տանող ճանապարհին Վեզները մտերմանում է իթթիհադի անդամ թուրք երիտասարդ մի սպայի հետ, իր իսկ խոստովանությամբ՝ «այն հույսով, որ այդ մտերմությունը կշարունակվի նաև Ստամբուլում, որ այդ ճանապարհով մուտք կգործեմ երիտթուրքական բարձր շրջաններ»⁹: Տամկեի պնդմամբ, երիտթուրքական բարձր շրջաններ՝ Թալեաթ, Էնվեր, Հաքքը փաշաների հետ Վեզների երազած կապը այդպես էլ մնաց հուսախաբ պատրանք:

Ուշագրավ են, սակայն, երիտթուրք առաջնորդների՝ պատերազմի տարիների վեզներյան բնորոշումները: Էնվերին, օրինակ, Վեզները որակում էր որպես «մեծ պատվախնդրության տեր մարդ, կարիերիստ, գեներալիսիմուս, նվաճող»: Թալեաթը նրա գրչի տակ հանդես

⁵ Նույն տեղում, էջ 44-49:

⁶ Նույն տեղում, էջ 54-62:

⁷ Նույն տեղում, էջ 67-69:

⁸ Նույն տեղում, էջ 69-72:

⁹ Նույն տեղում, էջ 74-75:

է գալիս «լայնաթիկունք», «գսպված հզորության» պատկերմամբ¹⁰: Մարտին Տամկեի կարևորագույն հետազոտություններից է նաև Ա. Վեգների՝ 1919 թ. մարտի 19-ին Բեռլինի «Ուրանիա» սրահում կարդացած «Հայ ժողովրդի արտաքսումը անապատ» վերտառությամբ դասախոսության բնագրի հայտնաբերումն ու ծանոթագրություններով, բացատրություններով հրատարակումը: Այսպես, արդեն պատերազմի ավարտին, իր դասախոսություններում կտրուկ կերպարանափոխված Վեգները հնչեցնում էր, որ պատերազմի տարիներին Թալեաթի և Էնվերի նպատակն էր ողջ «Արևելքի թրքացումը», որ հայերը պանթուրքիզմի քաղաքականության առաջին զոհերն էին, որոնց պետք է հաջորդեին «Սիրիայի քրիստոնյաները, ավելի ուշ՝ հույները և վերջում՝ արաբները»: Իր դասախոսության ընթացքում արդեն, հայաջնջման ողջ մեղքը Ա. Վեգները բարդում էր Թալեաթի, Էնվերի և Ջեմալի վրա¹¹, մի հանգամանք, որը, չգիտես թե ինչու երիտասարդ գրող և պատերազմի ընթացքում սանիտար Վեգները չէր նկատել: Ջեմալի հայատյաց վարքագծի նկարագրությունն ընթանում էր սեփական անձի մեծարման հետևողական և նուրբ ձևակերպումներով: Ջեմալին ոչ միայն իր ենթակա տարածքներում հայերին բնաջնջելու, այլև ասորիներին և մարոնիներին սովամահության մատնելու մեջ մեղադրելով՝ Վեգներն ավելացնում է, որ Ջեմալի հատուկ հրամանով «արգելվել էր հայերի բնաջնջման որևէ դրվագ լուսանկարել, որպեսզի այդ մասին արտասահմանում որևէ ապացույց չլինի»¹²: «Ուրանիա» սրահում դասախոսությունը զուգորդվում էր այն լուսանկարների ցուցադրությամբ, որոնք, իր խոսքերով, «ռազմական դատարանին հանձնվելու վտանգի ներքո» ինքն էր լուսանկարել, ապա «Օրագրերի» հետ գաղտնի, ներքնաշորերի տակ թաքցրած, անցկացնելով սահմանը, հասցրել Գերմանիա: Վեգների խոստովանությամբ, լուսանկարների գերակշիռ մասի հեղինակն ինքն էր, այնուամենայնիվ, հղելով 1909 թ. լուսանկարները՝ շեշտում է, որ դրանք պատկանում են ուրիշներին: Ըստ Վեգների, լուսանկարների մի մասը շարքից դուրս էր եկել արևից վնասվելով, այնուհետև նա կոչ էր անում հավատալ հայերի բնաջնջման այն սարսափներին, որոնց ինքն էր ականատես եղել՝ հավատալ իր աչքերին¹³: Տամկեն համոզված պնդում է, որ Հայոց ցեղասպանությունը պատկերող վեգներիան լուսանկարների հավաքածուի մեծ մասի հեղինակը Վեգները չէ¹⁴:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ **Tamcke M.**, Armin T. Wegners 'Die Austreibung des Armenischen Volkes in die Wüste', Einführung zum unveröffentlichten Vortragstyposcript vom 19. März in der Urania zu Berlin, in: **Tamcke M.**, *Orientalische Christen zwischen Repression und Migration, Beiträge zur jüngeren Geschichte und Gegenwartsfrage, Studien zur Orientalischen Kirchengeschichte, Band 13, Hamburg, Lit Verlag, 2001, S. 81-84.* (այսուհետև՝ **Tamcke M.**, Armin T. Wegners 'Die Austreibung des Armenischen Volkes in die Wüste').

¹² **Tamcke M.**, Armin T. Wegners 'Die Austreibung des Armenischen Volkes in die Wüste' S. 81-84.

¹³ Նույն տեղում, էջ 83-84:

¹⁴ Նույն տեղում, էջ 68:

Ուշագրավ է՝ Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրք առաջնորդների հետ բարեկամություն փնտրող Վեզները Բեռլինում Թալեաթի սպանությունից հետո հանդես եկավ դատավարության ընթացքում Մ. Թեյլերյանի պաշտպանությամբ, ապա շարադրեց «Թալեաթ փաշայի դատավարությունը», 1921թ. Բեռլինում լույս տեսած դատավարության արձանագրությունների ժողովածուի առաջաբանը:

1916 թ. նոյեմբերի 22-24-ն ընկած ժամանակահատվածում Ս. Վեզները ձեռք է բերում Կ. Պոլսում ռազմական առաքելությունը թողնելու և հետո՝ դեպի Բրեսլաու վերադառնալու իրավունք, ուր ժամանում է 1916 թ. դեկտեմբերի 8-ին¹⁵: Համաձայն Տամկեի, հայերի բռնագաղթին և բնաջնջմանը Ս. Վեզներն առաջին անգամ տեղեկանում է 1915 թ. հունիսին՝ Բերայի հիվանդանոցում եղած ժամանակ, որտեղ ծանոթանալով գերմանացի քահանա Հանս Բաուերնֆելդի հետ՝ իրագեկվում է Մարաշի հայաջնջման ողջ պատմությանը¹⁶: Հայոց ցեղասպանության վեզնեյան առաջին անմիջական դիտարկումը տեղի է ունենում դեպի Բադդադ տանող ճանապարհին՝ Հալեպի, Ռասուլ-Այնի հայ գաղթականների ճամբարներում, ապա՝ Բադդադի երկաթգծում աշխատող հայ բանվորների տառապանքների ու անմիջապես հաջորդած սպանդի մասին լսելով: Միայն ավելի ուշ, երբ նա վերջնականապես վերադարձավ Կ. Պոլիս, ապա՝ Գերմանիա, ճանապարհին կարողացավ տեսնել և անմիջականորեն շփվել հայ նահատակների հետ, այցելել նրանց ճամբարներն ու լսել վերապրած արհավիրքների մասին:

Մ. Տամկեն, մանրամասն քննության ենթարկելով «Օրագիրը», հանգում է այն մտքին, որ ձեռագիրը չի արտահատում այն սկզբնական շարադրանքը, որը գրի է առել Վեզները ճանապարհին: Մասնավորապես, Հայոց ցեղասպանության վեզնեյան նկարագրությունները հավելվել են միայն հետագայում, տարիներ անց, երբ «հայասեր» Վեզները լծվել էր «հայ ժողովրդի բարեկամի» տիպարի կերտման իր ձեռնարկած գործընթացին: Համաձայն Տամկեի, Վեզներն իր «Օրագիրը» հարստացնելու գործում մեծապես օգտվել է Յոհաննես Լեփսիուսի խմբագրած փաստաթղթերի նյութերից և հետագայում նրա հետ ստեղծած բարեկամական կապերից: «Օրագիրը», սակայն, անգնահատելի տեղեկություններ է պարունակում (1916 թ. սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 25-ը)՝ որպես Բադդադից Հալեպ տանող ճանապարհին հայ գաղթականների և նրանց ճամբարների ականատեսի նկարագրություններ: Վեզների ուղին անցնում էր մահվան գլխավոր ճամբարներով՝ Դեր էլ-Ձորով, Տիբինիով, Աբու Հերերայով, Մեսքենեով, Դեր Հավիրով¹⁷:

Հալեպից մինչ Կ. Պոլիս Վեզներն իր «Օրագրում» Հայոց ցեղասպանության հարցում լռություն է պահպանում: Մ. Տամկեն պատճառը հեզնանքով համարում է այն, «որ նա կրկին

ընկավ

Թուրքիա-

¹⁵ Tamcke M., *Armin T. Wegner und Armenier*, S. 78-79.

¹⁶ Նույն տեղում, էջ 86:

¹⁷ Նույն տեղում, էջ 92-112:

յում գերմանացիների միջավայրը, որոնք հաճույքով տանում էին բանաստեղծի ներկայությունը՝ որպես բազմազանություն»¹⁸: Հայերի վերապրած ողբերգությունը Ա. Վեգների «Օրագրում» զբաղեցնում է երկրորդական տեղ, հայ զոհերը նրա շարադրանքում ոչ գլխավոր դերակատարներն են: Պրոֆ. Տամկեի պնդմամբ, միայն հետո՝ «Օրագրի» հրատարակայնացման ժամանակ, նրանք դառնում են գործող գլխավոր անձինք, իսկ դրա պատճառը մեկն էր՝ պատերազմից հետո Գերմանիայում և ողջ աշխարհում սկիզբ առած հակաթուրքական տրամադրություններին ընդառաջելն ու դրանց տուրք տալը: Ա. Վեգները հակառակ վարքագիծ էր որդեգրել Օսմանյան Թուրքիայում ծառայության ժամանակ: «Նա մտերմություն էր փնտրում երիտթուրք շրջանների հետ, և նրա աչքերը երբեք չարտահայտեցին իր հայացքում եղած սարսափի քաղաքական պատճառները», - եզրահանգում է Մ. Տամկեն¹⁹:

Հալեպում Վեգները ծանոթանում է 1896 թ. ի վեր Օսմանյան կայսրությունում գործող «Արևելքում քրիստոնյաների օգնության բարեգործական միության» երկու քույրերի՝ Բեատրիս Ռոհների և քույր կամ, ինչպես հայ որբերն էին կոչում, մորաքույր Աննա Ենսենի հետ: Իրապես հերոս այս կինը՝ Բ. Ռոհները, 1915-1917 թթ. ընթացքում, տարբեր աղբյուրներից նյութական միջոցներ հանգանակելով և աղերսելով, վտանգի ենթարկելով սեփական կյանքը՝ Հալեպի շրջակայքում հիմնադրած մի շարք որբանոցներում կարողացավ հավաքել ու հիվանդության, սովի և մահվան ճիրաններից փրկել մի քանի հազար հայ որբերի: Նրան ճանաչում էին բոլորը՝ և՛ գերմանական բարձրաստիճան զինվորականները, և՛ Թուրքիայում հավատարմագրված դիվանագիտական անձնակազմը, և՛ օտարերկրյա դիվանագիտական առաքելություններն ու անձամբ երիտթուրք վերնախավը: Ի վերջո, 1917 թ. փետրվարի 17-ին վրա է հասնում Ջեմալ փաշայի հրամանը՝ Բեատրիս Ռոհների հիմնադրած որբանոցներից «70 հայ մանուկներին «խլելու և պետական որբանոցներից մեկը տեղափոխելու», նրանցից «հայրենասեր օսմաններ և մահմեդականներ դարձնելու» մասին: 1917 թ. մարտի 5-ի մեկ այլ հրամանով նույն բախտին են արժանանում ևս 1200 հայ որբեր: Մի քանի օր անց, քույր Ռոհները, հոգեկան խանգարում ստանալով, տեղափոխվում է Կ. Պոլիս, ապա՝ Գերմանիա: 1896-1917 թթ. ընթացքում այս կնոջ ձեռնարկած որբափրկիչ նվիրական աշխատանքն ավարտվում է որբերի բնաջնջմամբ: Դաժանության աստիճանն անգերազանցելի էր. քույր Ռոհներն անձամբ պետք է ուղեկցեր որբերին Հալեպի երկաթգծի կայարան և իր ձեռքով հանձներ երեխաներին սպասող դահիճներին: Բ. Ռոհները կատարեց հրամանը, բայց կայարանից վերադարձավ մտովի խաթարված և այդպես ապրեց մնացած կյանքը²⁰:

¹⁸ Նույն տեղում, էջ 116:

¹⁹ Նույն տեղում, էջ 117:

²⁰ Նույն տեղում, էջ 118-123: Վեգներն առաջին անգամ հրատարակավ խոսեց քույր Բեատրիս Ռոհների մասին «Ուրանիայում» կարդացած դասախոսության ժամանակ, այն էլ միայն հպանցիկ՝ մատնանշելով սոսկ այն գաղափարը, որ եղել են նաև գերմանացի միսիոներ կանայք, որոնք հոգ են տարել հայ որբերի մասին: Ա. Վեգներն անտեղյակ էր նաև, որ այդ բոլոր որբերն, ի վերջո, Ջեմալ փաշայի հատուկ հրահանգով «խլվել» էին, իսկ քույր Ռոհները հոգեկան խանգարում էր ստացել: Ավելի մանրամասն տե՛ս **Tamcke M., Armin T. Wegners** 'Die Austreibung des Armenischen Volkes in die Wüste, S. 110.

Վեգների ծանոթությունը Բ. Ռոհների և Ա. Ենսենի հետ տեղի ունեցավ 1916 թ. հոկտեմբերին: Իր «Օրագրում» 1916 թ. հոկտեմբերի 23-ով թվագրված հուշերում Ա. Վեգները մանրամասն նկարագրում է, թե ինչպիսի գթասրտությամբ էին այդ երկու հերոս կանայք խնամում ամիսներ տևած բռնագաղթից հյուծված, գերազանցապես Վանից և Էրզրումից եկած, ճանապարհին ծնողներին կորցրած մանուկներին: Հալեպում եղած ժամանակ է նաև, որ Վեգները նախաձեռնում է ցեղասպանության լուսանկարները հավաքելու իր աշխատանքը: Նա Հալեպում ծանոթանում է գերմանացի մի ընտանիքի հետ, որի դուստրերից երկուսն օժանդակում էին Բ. Ռոհների ձեռնարկած՝ անապատում որբերին հայտնաբերելու և Հալեպ տեղափոխելու գործին: Այդ դուստրերից մեկն, օրինակ, Պաուլա Կոխը, «հայերի սարսափների վերաբերյալ լուսանկարահանել էր բազմաթիվ նկարներ, և որից հետագայում՝ պատերազմի ավարտից հետո միայն» Վեգները խնդրեց դրանք իրեն տրամադրել²¹:

Ա. Վեգների և Բ. Ռոհների միջև եղած նամակագրության՝ Մ. Տամկեի վերլուծությունը փաստում է, որ 1917 թ. սկզբներին, երբ Վեգներն արդեն Գերմանիայում էր, ընդհուպ մինչև 1919 թ., և հնարավորություն ուներ նպաստելու երկու քույրերի աշխատանքին և հրապարակելու իր՝ որպես ակննատեսի ողջ պատմությունը, ոչինչ չարեց և միայն 1919 թ. փորձեց վերականգնել 1917 թ. սկզբներին քույր Ռոհների հետ խաթարված կապը՝ վերջինիս իր «հայասիրական» շարժման մեջ ընդգրկելու նպատակով²²:

1916 թ. դեկտեմբերի 8-ին Բրեսլաու վերադառնալով՝ Ա. Վեգներն առժամանակ մոռացավ հայերին: Մ. Տամկեն հեզնանքով է նշում, որ նա կրկին «հմտորեն խուսափում էր զինվորական ծառայությունից, սկզբում՝ 8 շաբաթյա արձակուրդով, որին հետևեց ևս 2 ամսով այն երկարացնելը»²³: 1917 թ. մարտի 2-ից, որպես դաշտային հրետանու գորակոչիկ 10 օր ծառայելուց հետո, տրտնջալով ձեռքի ցավից և մոր միջամտության շնորհիվ, Ա. Վեգները նորից գնաց հանգստի, որը տևեց ապրիլի վերջից մինչև մայիսի 10-ը: Արձակուրդից վերադառնալով՝ Վեգները տեղափոխվում է 6-րդ բանակի շտաբ՝ «Ժուռնալիստիկայի բաժին»՝ ընդգրկվելու անգլիացիների դեմ մղվող «քարոզչական» աշխատանքի մեջ²⁴: Տամկեի խորը համոզմամբ, «Ուրանիա» սրահում կարդացած դասախոսությունը, նաև հետագա՝ «հայանպաստ» գործունեությունը «քարոզչության» բաժ-

²¹ Tamcke M., *Armin T. Wegner und Armenier*, S. 123-125.

²² Նույն տեղում, էջ 125-131:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, էջ 155-156:

նում Վեզների աշխատանքի արդյունքն էին, և այդ աշխատանքը պայմանավորված էր քաղաքական նկատառումներով²⁵:

Հնարավորություն էր ստեղծվել լծվել գրական ստեղծագործական աշխատանքի: Դեռևս 1917 թ. սկզբներին լույս տեսավ Ա. Վեզների «Քաղաքների դիմագիծը» բանաստեղծությունների ժողովածուն: Բրեւալուում գործող թուրք-գերմանական դաշինքի ներկայացուցիչները, հայերի վերաբերյալ իր տեսակետները հրապարակելու պատճառով, առաջարկում էին Վեզներին «կրկին ռազմաճակատ ուղարկել»²⁶:

1917 թ. ընթացքում Վեզները շարադրում է փոքրիկ պատմվածքների ևս մի շարք: Հայոց ցեղասպանության թեմայով Ա. Վեզների առաջին գրական ստեղծագործություններն էին «Հարձակում կանանց բաղնիքի վրա» և «Բանկիրը» պատմվածքները: Առաջինն անդրադառնում էր Էրզրում քաղաքում 1896 թ. Աբդուլ Համիդի կազմակերպած հայերի կոտորածներին՝ նկարագրելով թուրքերի հարձակումը հայ կանանց բաղնիքի վրա, որին զոհ գնացին շուրջ 350 կանայք: Պրոֆ. Տամկեն իր աշխատության մեջ զարգացնում և շարունակաբար փաստերով հավաստում է այն գաղափարը, որ 1917 թ. կեսերից ի վեր Հայոց ցեղասպանության ժանրի ի հայտ գալը վեզների ստեղծագործությունների մեջ պայմանավորված էր ոճագործության մեջ Գերմանիայի մեղսակցությունը նվազեցնելու քաղաքական պատվերով և ձգտումով: Այս շրջանում, Վեզները թղթակցում էր Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քարոզչության բաժնի հիմնադրած «Նոր Արևելք» պարբերականին և համագործակցում Գերմանիայում վաղուց ի վեր գոյություն ունեցող հայանպաստ շարժմանը՝ ի դեմս պրոֆ. Հ. Գերլախի, Արևելքում բողոքական առաքելության ղեկավար Յոհաննես Լեփսիուսի, Մարբուրգի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր Մարտին Ռադեի: Այս շրջանում Վեզները նաև Գերմանիայում մեծ թափ ստացած պացիֆիստական շարժման ներկայացուցիչ էր²⁷:

Արմին Թեոֆիլ Վեզների կողմից Հայոց ցեղասպանության լուսաբանման և «հայանպաստ» գործունեության երկիմաստ ու հակասական էությունն ըմբռնելու իմաստով կարևորագույն նշանակություն ունեն Մ. Տամկեի ևս մի շարք գիտաքննական հոդվածները: Դրանցից մեկում²⁸ զետեղված է Ա. Վեզների մեկ այլ դասախոսության տեքստը, որի գոյության մասին մինչ օրս հայտնի չէր ոչ ոքի:

²⁵ **Tamcke M.,** Armin T. Wegners 'Die Austreibung des Armenischen Volkes in die Wüste', Einführung zum unveröffentlichen Vortragstypuscript vom 19. März in der Urania zu Berlin, in: DAVO-Nachrichten 13, 2001, S. 15-16.

²⁶ **Tamcke M.,** Armin T. Wegner und Armenier, S. 157-158.

²⁷ *Նույն տեղում, էջ 164-171:*

²⁸ **Tamcke M.,** Armin T. Wegners erste Zeugnisse zum Völkermord and den Armeniern in seinem Vortrag 'Mit dem Stabe des Feldmarshalls von der Goltz in Mesopotamien' in: Martin Tamcke, Koexistenz und Konfrontation, Beiträge zur jüngeren Geschichte und Gegenwartslage der Orientalischen Christen, Studien zur Orientalischen Kirchengeschichte, Band 28, Hamburg, Lit Verlag, 2003, S. 319-365 (*այսինքնում՝ Tamcke M., Mit dem Stabe des Feldmarshalls von der Goltz in Mesopotamien*).

Այն իր բովանդակությամբ, մեղմ ասած, հակահայկական է: «Միջագետքում ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցի շտաբի հետ մեկտեղ» վերտառությամբ դասախոսությունը Ա. Վեզները շարադրել է Թուրքիայից վերադառնալուց քիչ անց, արդեն որպես «քարոզչության» բաժնի աշխատակից, 1918 թ. փետրվարի 27-ին, Բեռլինում՝ «Գերմանա-թուրքական միության» կազմակերպած երեկույթի ժամանակ: Երեկոն նվիրված էր ֆոն դեր Գոլցի հիշատակին, մի մարդու, առանց որի, Թուրքիան դեռ վաղուց տանուլ տված կլիներ պայքարը Միջագետքում՝ հաղթանակը զիջելով անգլիացիներին: Գոլցի շտաբում «ծառայած» Վեզները գեներալին ուղեկցել էր ռազմական գլխավոր հենակետեր այցելությունների ժամանակ, իսկ այդ ճանապարհներն անցնում էին հայերի ճամբարների ու քարավանների և նրանց դիակների վրայով:

Դասախոսության ընթացքում անդրադառնալով հայերին՝ Ա. Վեզները գրում է. «Դավաճանությունը, որը բազմաթիվ անգամներ արեցին հայերը (Ա. Վեզները հետագայում օգտագործում է բնակիչներ բառը - Ս. Տ.) էրգրումի և Վանի ռուսական սահմանի վրա, թուրքական կառավարությանը հարկադրեցին ձեռնարկելու սահմանակից շրջանների բնակիչների գերակշիռ մասին տեղափոխելու ավելի հեռու՝ հարավային շրջաններ»²⁹: Հայերին անդրադառնալու պարագայում Վեզները գործածում է «վերաբնակներ», երբեմն՝ «փախստականներ» բառերը³⁰, հավելելով, որ թուրքական կառավարությունն այդ «վերաբնակների կարիքները թեթևացնելու նպատակով նրանց սննդամթերք էր բաժանում»³¹: Իսկ լսելով իրավագիտության դոկտոր, գրող, ժուռնալիստ-սանիտար Վեզներին՝ ունկնդիրն, անշուշտ, կարող էր լցվել միայն խոր հայատեցությամբ՝ ծանոթանալով վերջինիս հետևյալ բացահայտումներին այն մասին, որ փախստական հայերն իրենց հետ բերած համաճարակներով ու տիֆով վարակում էին հսկայական քանակությամբ թուրք և գերմանացի զինվորների, որոնց մեջ այնքան բարձր էր մահացությունը³²: Դժվար չէ կռահել, թե ինչ պետք է զգար ներկա գտնվողներից յուրաքանչյուրը, որը եկել էր լսելու և հավերժացնելու տիֆից մահացած գեներալ ֆոն դեր Գոլցի հիշատակը:

Գաղտնիք չէ, որ հայերի՝ «ռազմական անհրաժեշտությունից բխող» վերաբնակեցման վարկածը շրջանառության մեջ դրվեց ոչ միայն Թուրքիայում, այլև դաշնակից երկրներում. գերմանական քարոզչությունն աշխարհին համոզում էր, որ թուրքերը վերաբնակեցնում են հայերին իրենց իսկ անվտանգությունն ապահովելու նպատակով: Այս իմաստով պատահական չէին քարոզչության բաժնի աշխատակից Ա. Վեզների՝ 1918-1919 թթ. ընթացքում կայացրած «բացահայտումները»³³: 1918 թ. սկզբներին Ա. Վեզները Թուրքիայի մեծ վեզիր Թալեաթ բեյին որակում էր որպես «արևելքի Բիս-

²⁹ Tamcke M., *Mit dem Stabe des Feldmarshalls von der Goltz in Mesopotamien*, S. 334.

³⁰ Նույն տեղում, էջ 325, 326, 333:

³¹ Նույն տեղում, էջ 334:

³² Նույն տեղում, էջ 335, 355:

³³ Tamcke M., *Armin T. Wegner und Armenier*, S. 177-180.

մարկ»։ Քիչ անց միայն, երբ Գերմանիան տանուլ տվեց պատերազմը, և Ա. Վեգները, կրկին ընդառաջելով արտաքին գործերի նախարարության շրջաններում ձևավորված այն նպատակին, որն արդեն պահանջում էր հայերին ներկայացնել որպես անմեղ զոհեր, ոճրագործության մեջ Գերմանիայի մեղսակցությունը նվազեցնելու համար դարձավ «հայասեր»։ Այսպես, օրինակ, 1919 թ. կտրուկ կերպարանափոխված Վեգները Յո. Լեփսիուսին գրում էր. «Գերմանիան իր մեղսակցությունը կարող է արդարացնել միայն այն ժամանակ, երբ հանդես գա Հայաստանի իրավունքների և ազատության» պաշտպանությամբ։ Այս ենթատեքստում է Մ. Տամկեն բացատրում 1919 թ. փետրվարի 23-ին «Բեռլիներ Թագերլաթ» պարբերականում Ա. Վեգների հրապարակած հայտնի բաց նամակը՝ ուղղված ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին³⁴։ «Հայ ժողովրդի արտաքսումը անապատ» վերտառությամբ այս նամակը մի ակնթարթում տարածվեց ողջ աշխարհում՝ ծնունդ տալով ևս մեկ «հայասերի», այս անգամ արդեն հանձին Արմին Թեոֆիլ Վեգների³⁵։

Նամակով Ա. Վեգներն իր համար կանաչ ճանապարհի հարթեց դեպի Գերմանիայում առկա բողոքական այն շրջանները, որոնք վաղուց ի վեր հայտնի էին իրենց հայանպաստ գործունեությամբ՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի գլխավորած «Գերմանական արևելյան առաքելություն», «Արևելքում քրիստոնյաների բարեգործության միություն», «Անհրաժեշտ գթասրտության միություն», նաև՝ «Գերմանա-հայկական ընկերություն»։ Միաժամանակ, Ա. Վեգները չէր դադարում նամակներով բախել այն բազմաթիվ մարդկանց դռները, որոնք, իր իսկ տեղեկության համաձայն, ձեռքի տակ ունեին Հայոց ցեղասպանությանն առնչվող լուսանկարներ։ Վեգների նպատակն էր դրանք ի մի բերել, ապա՝ հրապարակել։ Այդ անձանց հետ Վեգների ճանապարհը կամա թե ակամա խաչվել էր Թուրքիայում անցկացրած «ծառայության» ընթացքում։ Շատերն իսկապես ընդառաջ գնացին երիտասարդ գրողի խնդրանքին և «մարդասիրական» ձրգտումներին՝ նրան նվիրելով իրենց հավաքածուները, իսկ ոմանք՝ ոչ։ Հայոց սպանող փաստող լուսանկարների հավաքչության մեջ Վեգներին մեծապես օգնեց Յո. Լեփսիուսը³⁶։ Հեղինակի պնդմամբ, Վեգներ-Լեփսիուս կապը բացատրվում էր քաղաքական դրդապատճառներով, նաև՝ պատվերով. իջեցնելու Գերմանիայի մեղսակցության աստիճանը, մինչև 1919 թ. Փարիզում կսկսվեր հաշտության կոնֆերանսը։ Մ. Տամկեն գրում է. «Այդ շաբաթների ընթացքում Լեփսիուսը նույնպես «ծածուկ» նստել էր Բեռլինում, Վիլհելմշտրասե

³⁴ Նույն տեղում, էջ 183-184։

³⁵ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին հղված «Հայ ժողովրդի արտաքսումը անապատ» վերտառությամբ Ա. Վեգների բաց նամակն առաջին անգամ լույս է տեսել “Die Frau der Gegenwart” XIII, NF VII, Nr. 3-ում և միայն քիչ անց՝ 1919 թ. փետրվարի 23-ին վերահրատարակվել “Berliner Tageblatt” -ում։ 1919 թ.-ից ի վեր Ա. Վեգները մի քանի անգամ խմբագրել, լրացրել և տարբեր աղբյուրներում հրատարակել է իր նամակը։ Այդ մասին մեզ պարզ դարձավ Գերմանիայի գրականության արխիվում պահպանվող նամակի տարբերակներին ծանոթանալու ընթացքում։

³⁶ Tamcke M., Armin T. Wegner und Armenier, S. 185-190.

75 հասցեում արտաքին գործերի նախարարության N 138 իր սենյակում և գրում էր 1919 թ. հունիսին հրատարակվելիք «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.» փաստաթղթերի նյութերի ժողովածուն, որի առաջին՝ Գերմանիայի քավությանն ուղղված առանձնատիպերը Վերսալի հաշտության կոնֆերանս ուղարկվեցին 1919 թ. մայիսին: Նա աշխատում էր անկաշկանդ, նախարարության հետ լիովին համաձայնության մթնոլորտում»³⁷:

1920 թ. արդեն Ա. Վեգները խզել էր կապը արտաքին գործերի նախարարության հետ: Բայց ո՛չ հայերի: 1920 թ. հրատարակվեցին նրա նամակներից և «Օրագրից» հատվածներ պարունակող երկու նոր գրքերը՝ «Ճանապարհ առանց տունդարձի» և «Երջանկության տան մեջ»: Երկուսն էլ անուղղակի պատկերում էին Հայոց ցեղասպանությունը: Վ. Վիլսոնին հղած նամակից, վերը հիշատակված հրատարակություններից հետո Վեգները վայելում էր ողջ հայության համակրանքը: Նրա գրքերը վաճառվում էին մի ակնթարթում, վերապրած հայերը նրան պատկառելի գումարներ էին վճարում գաղթօջախների հայկական պարբերականներում հոդվածներ հրապարակելու նպատակով ու նաև՝ «բռնագաղթին նվիրված՝ դեռևս շարադրվելիք վեպի դիմաց»³⁸: Այդ վեպն այդպես էլ լույս աշխարհ չեկավ, չնայած դրա համար Վեգները վերջին գումարը ստացավ 1960-ական թթ. վերջին՝ անձամբ Ն.Ս.Օ. Ս.Տ. Վազգեն I վեհափառից:

1920-ականից մինչ կյանքի վերջը, Ա. Վեգների կենսագիրներից, գիտական ատենախոսությունների հեղինակներից յուրաքանչյուրը³⁹, այդ թվում՝ Մ. Տամկեն, պնդում են, որ Վեգները մինչև մահը գրել է հայերին ու գլխավորապես Հայոց ցեղասպանությանը նվիրված վերը հիշատակված վեպը: Հայոց ցեղասպանության և հրեական ողջակիզման վերաբերյալ Ա. Վեգների պատմաքննական վերլուծական իր հոդվածներից մեկում (հղելով Ա. Վեգների 1966 թ. մեկ այլ հրապարակումը) Տամկեն հիշատակում է նաև վեպի անվանումը՝ «Ստվերներն արևի ներքո»⁴⁰: Ա. Վեգների կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ գրվելիք պատմավեպի լույս աշխարհ չգալու առեղծվածը կարծես թե բացահայտվում է Ֆրանց Վերֆել և Արմին Վեգներ նամակագրական «մարտի» ենթատեքստում: Ա. Վեգներն ընդհուպ մինչև իր մահը (իսկ դա երևում է նաև Վեգ-

³⁷ Նույն տեղում, էջ 201:

³⁸ Նույն տեղում, էջ 201-205:

³⁹ Հայոց ցեղասպանության թեմայով Վեգների գրելիք վեպի մասին ավելի մանրամասն տե՛ս նաև **Wernicke-Rothmayer Johanna**, *Armin T. Wegner: Gesellschaftsfahrung und literarisches Werk*. Frankfurt/Main, Berlin, 1982 (*Europäische Hochschulschriften, Reihe 1, Deutsche Sprache und Literatur, Vol. 503*); **Rooney Martin**, *Leben und Werk Armin T. Wegners (1886-1978) im Kontext der sozio-politischen und kulturellen Entwicklungen in Deutschland*. Frankfurt-am-Main; Haag und Herchen, 1984; **Nikisch Reinhard**, *Armin T. Wegner: Ein Dichter gegen die Macht. Grundlinien einer Biographie des Expressionisten und Weltreporters Armin T. Wegner (1886-1978)*. Wuppertal: Peter Hammer, 1982.

⁴⁰ **Tamcke M.**, *Zum Beieinander von Shoah und Völkermord an den Armeniern bei Armin T. Wegner, Eine Glosse zu Wegners Essay ‚Die Feuerkugel‘ von 1966*, in: *Hans-Lukas Kieser, Dominik Schaller, Der Völkermord an den Armeniern und die Shoah. The Armenian Genocide and the Shoah, Zürich, 2002, S. 481.*

ներ-Վերֆել նամակագրությանը նվիրված՝ Մարտին Տամկեի հոդվածից), Ֆրանց Վերֆելին մեղադրում էր իր «նյութը» յուրացնելու, մեղմ ասած, գրագողության մեջ⁴¹: Այս առումով, Թեսա Հոֆմանը նույնպես հավաստում է, որ վեպն այդպես էլ լույս աշխարհ չեկավ, «չնայած այն խրախուսանքին և աջակցությանը, որը Վեգները ստացավ հայերից: Նա բացատրում էր իր անհաջողությունն այն փաստով, որ Ֆրանց Վերֆելն հրատարակեց իր «Մուսա լեռան քառասուն օրն» ավելի վաղ, քան ինքը»⁴²: Մ. Տամկեի պնդմամբ, Հայոց ցեղասպանության ականատեսի «անհրաժեշտ կեցվածքը» ընդունելու գործում կարևոր դեր խաղաց 1921 թ. գարնանը Թալեաթի սպանությունը: Ա. Վեգների կերպարը, սակայն, գտնվում էր «Յո. Լեփսիուսի ստվերի ներքո»⁴³: 1921 թ. մարտի 15-ին Բեռլինի փողոցներից մեկում սպանելով Հայոց ցեղասպանության ոճրագործներից Թալեաթին՝ Մ. Թեխլիրյանն իր վրա բնեռեց ոչ միայն առաջա-դեմ մարդկության ուշադրությունը, այլև Գերմանիայում «հայանպաստ» շարժման ողջ ներուժը, որը նպաստեց դատավարության ժամանակ նրա պաշտպանությանը: Այն մեծաքանակ փաստաթղթերը, որոնք պաշտպանության ընթացքում ներկայացվեցին դատարանին, բազմաթիվ վկաների՝ Յո. Լեփսիուսի, Լիման ֆոն Սանդերսի, գրող Ա. Անտոնյանի, դիվանագիտական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների, զթության քույրերի, միսիոներների և այլոց ցուցմունքները հետապնդում էին միայն մեկ նպատակ՝ դատարանին հավաստելու, որ Թալեաթի սպանությունն արդարացված է օրենքով, դա բնական և արդար պատիժն էր այն ոճրագործության, որի գլխավոր նպատակը հայ ժողովրդի միտումնավոր բնաջնջումն էր:

Դատարան հրավիրվածների մեջ էր նաև ցեղասպանության «ականատես» Վեգները: Նա, որպես գլխավոր ապացույց, դատարանի առջև դրեց Վ. Վիլսոնին հասցեագրած նամակը և «Ճանապարհ առանց տունդարձի» գիրքը: 1921 թ. հունիսի 3-ին դատարանը կայացրեց իր հայտնի որոշումը՝ «Թեխլիրյանը մեղավոր չէ»: Մեղավոր էր սպանվածը: Իրավունքի պատմության մեջ այս բացառիկ դեպքը հիրավի Գերմանա-հայկական ընկերության աշխատանքի արդյունքն էր: Ընկերությունը որոշեց դատական արձանագրությունները հրատարակել երեք լեզվով՝ հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն: Ապա այն հրատարակվեց նաև գերմաներեն՝ «Թալեաթ փաշայի դատավարությունը» վերտառությամբ: Աշխատանքը ղեկավարում էր Յո. Լեփսիուսը, իսկ ներածությունը գրեց նույն Վեգները, որը պատերազմի տարիներին մեծարման խոսքեր էր ձոնում Թուրքիայի մեծ վեզիրին՝ լինելով ոճրագործությունների «ականատեսը»⁴⁴:

⁴¹ **Tamcke M.**, *Briefwechsel Franz Werfel-Armin T. Wegner*, in: *Katharina Gaede mit Christfried Berger und Hans-Christian Diedrich, Spuren in Vergangenheit – Begegnungen in der Gegenwart, Glauben, Lehren, und Leben in orthodoxen, altorientalischen und evangelischen Kirchen, Festschrift für Hans-Dieter Döpmann, Berlin, 1999, S. 154-160.*

⁴² **Hofmann T.**, *նշվ. աշխ.*, էջ 8-9:

⁴³ **Tamcke M.**, *Armin T. Wegner und Armenier*, S. 208.

⁴⁴ *Նույն տեղում, էջ 208-216:*

1926 թ. փետրվարի 3-ին մահացավ Լեփսիուսը՝ «Վեզների գլխավոր հովանավորը»։ Լեփսիուսի մահվամբ, Տամկեի կարծիքով, աստիճանաբար նվազեց, ապա մարեց Գերմանիայում տասնամյակներ առաջ սկսված «հայամետ» շարժումը, որը գլխավորում էին բողոքականները։ Այս շրջանում արդեն ոչ ոք կարիք չունեի լսելու Ա. Վեզներ «սկանաստեփ» պատմություններն ու հուշերը⁴⁵։

Վեզները, սակայն, այդպես էլ երբեք չխզեց կապը հայերի հետ։ Պատճառներն ինչպես օրյեկտիվ, այնպես էլ եսակենտրոն էին։ 1927 թ. առաջին անգամ Վեզներն այցելեց Խորհրդային Հայաստան։ Խորհրդահայ պատմագիտության գնահատմամբ, այդ այցը բացատրվել է իր ապագա վեպի համար նյութեր հավաքելու անհրաժեշտությամբ⁴⁶, ինչն իսկապես ճշմարիտ է, բայց՝ մասամբ։ Մասամբ, քանզի այդ վեպն այդպես էլ երբեք երևան չեկավ։ Իսկ Խորհրդային Հայաստան այցի գլխավոր պատճառն այն էր, որ արդեն խորհրդային կարգերի համակիր Վեզներն այն սակավաթիվ գերմանացիներից էր, որը Մոսկվայից ստացել էր Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի 10-ամյակի միջոցառումներին մասնակցելու պաշտոնական հրավեր։ Միջոցառումներից հետո Վեզներն ու նրա կինը՝ Լոլա Լանդաուն պետք է ճամփորդեին կնոջ հայրենիքում՝ Պաղեստինում։ Այդ ճամփորդությունը Վեզները զուգորդեց Հյուսիսային Կովկաս, Հայաստան, ապա՝ Պարսկաստան այցելություններին։ Հայաստանում նա իսկապես մնաց բավական երկար, շուրջ 2 ամիս, իսկ 1927 թ. դեկտեմբերին այցելելով Էջմիածին՝ հանդիպեց նաև Գևորգ V կաթողիկոսին։ Խորհրդային Հայաստան կատարած այցելությանը նույնպես Մ. Տամկեն վերաբերվում է քննադատաբար՝ դիպուկ նկատելով, որ արտասահմանում նա մտերմություն էր անում «դաշնակցականների հետ», իսկ Հայաստանում գովաբանում տիրող կոմունիստական վարչակարգը, որն, ի միջի այլոց, այդ օրերին սահմանափակել էր Հայ առաքելական եկեղեցու իրավունքները, իսկ վեհափառի սեղանին, Վեզների հավաստմամբ, դրված էր այդ օրերին լույս տեսած՝ հայ եկեղեցու դեմ խորը քննադատական հողված պարունակող «Պրավդան»⁴⁷։

Իր երկարատև կյանքի ընթացքում, գրական և հասարակական գործունեության մեջ Ա. Վեզները որևէ քննարկվող թեմայում, մանավանդ գրական, իրադարձություններն ու գաղափարները հանգուցավորել է միայն իր սեփական եսի շուրջ։ «Նա կառավարում էր հասարակական կարծիքը։ Այդպես էր նաև հայերի պարագայում, որոնց նա շուտով մոռացության մատնեց, և որոնց խորտակեց իր «հիշողության ստվերներում»,- իր մենագրությունը եզրափակում է

⁴⁵ Նույն տեղում, էջ 218-220։

⁴⁶ Ստեփանյան Ստ., *Հայոց ցեղասպանության ակնհատե գերմանացի մեծ մարդասեր Արմին Վեզների վկայությունները* (Վասն հայության, 22.IV.2002, էջ 4)։

⁴⁷ Tamcke M., *Leben im Zwiespalt. Anmerkungen zu Armin T. Wegners Armenien-Reise 1927*, in: Armenuhi Drost-Abgarjan, Hermann Goltz, *Armenologie in Deutschland, Beiträge zum Ersten Deutschen Armenologen-Tag, Studien zur Orientalischen Kirchengeschichte, Band 35, Münster, 2005, S. 201-217*։

Մ. Տամկեն և հավելում՝ «ականատեսն անհետացավ, գտնվեց նորը...հերոս Վեզներն այլևս գոյություն չունեն»⁴⁸: Ճշմարիտ է Տամկեն՝ ամփոփելով, որ «բացառիկ պրոբլեմատիկ այս մարդն, այնուամենայնիվ, 1915-1916 թթ. հայերի բռնագաղթի իրական ականատեսն էր», բայց նաև ավելացնում է, որ որոշ «առանձին դրվագներ արժանի են ուշադրության», ու թվարկում՝ «1. Վեզների հրատարակած «Օրագիրը»՝ «Տունդարձի 40 օրերն ու գիշերները» պետք չէ օգտագործել որպես աղբյուր հայերի բռնագաղթն ու հեղինակի հերոսությունները պատկերելու համար: 2. 1919 թ «Ուրանիա» սրահում Վեզների կարդացած «Հայ ժողովրդի արտաքսումը անապատ» խորագրով դասախոսությունը, որը կոչված էր կերտելու «ականատեսի» իր կերպարը, գրական երևակայության և ստեղծագործության արդյունք էր: 3. 1916 թ. «Օրագիրը» անգնահատելի և արժանահավատ աղբյուր է» Հայոց ցեղասպանության տարբեր անհայտ դրվագներ հասկանալու համար: Որոշ դեպքերում «Օրագիրն» ի հայտ է բերում մինչ օրս անհայտ փաստեր և նոր լույս սփռում հատկապես որոշ վայրերում տեղ գտած սպանդի մանրամասերի վրա: 4. Հայոց ցեղասպանությանն ու հայերին առնչվող՝ Վեզների լուսանկարների հավաքածուն (շուրջ 100 լուսանկար) դժվար թե ամբողջովին ստեղծված լինի Ա. Վեզների կողմից: Արդարացի է Տամկեն՝ նշելով, որ լուսանկարներից յուրաքանչյուրին պետք է վերաբերվել մեծ զգուշավորությամբ՝ պարզելու համար դրանց ծագումն ու աղբյուրը: Այս նպատակով, անգնահատելի կարող է լինել ժամանակակից ռեպրոգրաֆիկ փորձաքննության մեթոդը՝ մի միջոց, որն այս դեպքում մինչ օրս չի կիրառվել⁴⁹: Այլ հակառակը՝ Հայոց ցեղասպանությունը պատկերող ցանկացած հրատարակություն և ցանկացած պատկերասրահ, այդ թվում նաև «Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտը», Վեզների հավաքածուն առանց որևէ վերապահության համարում են վեզների ժառանգության բաղկացուցիչ մասնիկ:

Մ. Տամկեի մենագրությունն ու այն լրացնող մեկ տասնյակից ավելի հոդվածները նոր խոսք են ինչպես Ա. Վեզների թողած ժառանգությունը նորովի արժևորելու, այնպես էլ դրան հոռետեսությամբ վերաբերվելու և գիտական անաչառություն ցուցաբերելու հրամայականով: Անկասկած, Հայոց ցեղասպանության հարցում համոզիչ և փաստաթղթերով հիմնավորված կլինի նաև վեզների ժառանգության գիտաքննական և քննադատական վերաբերմունքը, որը նոր էջ է բացում Հայոց մեծ եղեռնի տարբեր անհայտ ու անամփոփ դրվագների գիտական ուսումնասիրության ուղղությամբ:

⁴⁸ Tamcke M., Armin T. Wegner und Armenier, S. 237.

⁴⁹ Նույն տեղում, էջ 237-238:

